

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ն. Տ. Գասպարյան — Վիկտոր Հյուգոն հայ գրականություն մեջ

ԴՈ. հրատարակություն, 1963 թ., 294 էջ:

Բանասիրական գիտությունների թեկնածու Հայկ Գասպարյանի՝ վերոհիշյալ խորագիրը կրող աշխատությունը, որը 1963 թ. հրատարակել է գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը, հենց սկզբից իսկ ընթերցողի մոտ ծանրակշիռ ու լուրջ ուսումնասիրության հետ գործունեանալու ականալիքներ է ստեղծում: Դրան նպաստում է նախ՝ թեմայի ընտրությունը, հանրահայտ է, որ Հյուգոն, եվրոպական հեղինակներից թերևս միակն էր, որին գրական-պատմական դեպքերի բերումով, վիճակված էր անփոխարինելի դեր կատարել 19-րդ դարի հայ նոր գրականության գրական անդաստանում: Այդ էր պատճառը, որ Հյուգոն դարձավ մեր ժողովրդի ամենից շատ սիրված, ամենից ավելի թարգմանված ու մեկնարանված, և, որ ավելի հետաքրքրական է, ամենից ավելի թեր և դեմ կարծիքներ հարուցած հեղինակը: Մի հեղինակ, որի շուրջն ստեղծված լայնածավալ գրականությունը ինքն աբղեն խոսում է իր մասին: Եվ պատասխանատվության դեպքումով այդ թեմային մոտենալն է նկատվում Գասպարյանի՝ առաջաբանում ասված այն մտքի մեջ, որ «Սույն ուսումնասիրությունը հիշյալ լայնապարփակ թեմայի տարրեր կողմերո ընդգրկելու առաջին փորձն է»:

Ի թիվս դրականի պետք է նշել, որ հեղինակը կարողացել է մեր պարբերականներից դուրս բերել Հյուգոյի մի քանի նորահայտ թարգմանությունները, որոնք այլևայլ առիթներով մատուցվել են հայ հանրությանը: Չմոռանանք, իհարկե, որ այդ գործը, իրենց հիմնական մասով, ժամանակին արել են Ղադիկյանն ու, վերջերս, Հովհ. Պետրոսյանը իրենց հայտնի աշխատություններում:

Դրական ականալիքներին նպաստում է նաև գրքի գեղեցիկ ձևավորումը, իլյուստրացիոն նյութի խնամքով ընտրությունն ու ճաշակով տեղադրումը (նկարիչ-ձևավորող Կարո Տիրատուրյան), որը, որոշ դեպքերում հասնում է մասնագիտական հմտության: Առհասարակ, իբրև գրական երևույթ պետք է նշել այն հանգամանքը, որ «Դրական կապեր» խորագրի ներքո հրատարակված բոլոր հինգ անուն աշխատություններն էլ աչքի են ընկնում իրենց լավ ձևավորմամբ: Այս բոլորից հետո սպասում ես, որ «Վիկտոր Հյուգոն հայ գրականության մեջ» աշխատությունում համեմատաբար ուշագրավ խոսք կլինի ֆրանսիական մեծ գրողի և հայ գրականության ազդեցականության վերաբերյալ, մանավանդ որ այդ մասին որևէ ամբողջական խոսք առ այսօր գոյություն չունի: Սակայն սպասելիքները մնում են սպասելիք. ականալիքները՝ ականալիք և Հայկ Գասպարյանի «Վիկտոր Հյուգոն հայ գրականության մեջ» խորագիրը կրող աշխատությունը կարողալուց հետո աստիճանաբար գալիս ես այն եզրակացության, որ իր մեկ-երկու դրական կողմերով հանդերձ, գործը, ասենք այդ միանգամից, չի ստացվել:

Խոսել Վիկտոր Հյուգոյի և նրա կատարած գերի մասին հայ գրականության պատմության մեջ, — նշանակում է քաջ ծանոթ լինել ֆրանսիական և հայկական 19-րդ դարի ամբողջ գրականությանը: Սա էլ իր հերթին նշանակում է՝ կարողանալ կողմնորոշվել երկու երկրներում կյանքից զրկված վերջնական տապալման և ռոմանտիզմի՝ որպես գրական նոր ուղղություն, իր իրավունքների մեջ հաստատվելու հետ կապված բազմաթիվ ամենակին էլ ոչ հեշտ հարցերում: Ֆրանսիական գրականության մեջ գրական-պատմական այդ նորարարությունը վիճակված էր կատարել Վիկտոր Հյուգոյին, որն իր ամբողջ գործունեությամբ վերջնականապես հաստատեց ռոմանտիզմը ֆրանսիական գրականության մեջ, իսկ «Կրոմվելի» հռչակավոր առաջաբանում (1827 թ.) տվեց այդ նոր ուղղության տեսությունն ու գեղագիտական հիմունքները: Այս ամենը խստիվ համահնչյուն էր 19-րդ դարի առաջին կեսի հայկական իրականության հետ, որովհետև մեզ մոտ էլ կյանքիստական հնացած գրական ուղղությունը աստիճանաբար իր տեղը զիջում էր ռոմանտիկական գրական դարոցին, որս օրավուր ավելի ու ավելի էր հայտարարում իր իրավունքները: Ահա թե ինչու Վիկտոր Հյուգոն ջերմորեն ընդունվեց հայկական ռոմանտիկների

կողմից, դրվատվեց ու մեծարվեց, արժանացավ ամենաբարձր ու հիացական գնահատականների և, որ ամենից ավելի կարևորն է, դարձվեց պայքարի դրոշ կրողների ղեկավարը: Այս է Հյուգոյի՝ հայ գրականության մեջ ներթափանցող գրական-քաղաքական ամենակարևոր շարժառիթներից մեկը: Սպասում են, որ այս և նման կարգի հարցերին պիտի անդրադառնա հեղինակն իր աշխատության առաջին՝ «Վիկտոր Հյուգոն հայ գրական մտքի գնահատմամբ» գլխում, որովհետև դա է հիմքերի հիմքը, որից պետք է սկսել վերոհիշյալ թեմայի ուսումնասիրությունը: Սակայն այդ բոլորը մի կողմ թողած՝ Գասպարյանը չգիտիս ինչու սոսկ բավարարվել է հայ արձակագիրների, բանաստեղծների, դրամատուրգների, թարգմանիչների և մշակութային մեր այլ գործիչների կարծիքների երկար-բարակ շարադրանքով: Մեր առարկությունը գուցե թույլ լիներ, կամ թերևս չլիներ իսկ, եթե այդ կարծիքները շարադրելուց հետո հեղինակն ասեր իր ինքնուրույն խոսքը, ընդունել կամ չընդունել այս կամ այն միտքը, լրացներ, մեկնաբաներ, ճշգրտեր Հյուգոյի վերաբերյալ հայտնված տեսակետները, սակայն, դժբախտաբար, այդպես չի արվել: Գասպարյանը բարեխղճորեն և մեծ ճշտապահությամբ իրար հետևից ղեկավարել է մեր գործիչների գանազան կարծիքները Վիկտոր Հյուգոյի մասին և դրանով էլ ավարտել: «Խորեն Նար-Պելլը, — գրում է հեղինակը, — Վիկտոր Հյուգոյի մեջ տեսնում է երկնառք մարգարեն, սիրո, վշտի, հույսի երգիչը, մարդկային զգացմունքների բանիմաց թարգմանը և աստվածային արարչագործության քաղցրալիզու տաղերգուն» (էջ 14): Դրանից անմիջապես հետո կարդում ենք. «Գրիգոր Զիլինկիրյանը... թշվառների» թարգմանության առաջաբանում Հյուգոյին ներկայացնելով որպես խոշոր արվեստագետի, միաժամանակ ընդգծում է, որ ամենից առաջ նա պայքարող մարտիկ է» (էջ 14—15): Դրանից հետո. «Հյուգոյով հիացողներից մեկն է Եղեղ Պետրոս Դուրյանը, որը 1870 թ. գրած իր «Թատրոն և թշվառներ» դրամայում յուրովի տալիս է իր գնահատականը մեծ գրողի մասին: ...Պարզ է, որ դրամայի գործող անձի բերանով Դուրյանը իր հիացմունքն է հայտնում Հյուգոյի նանդեպ» (էջ 16): Դրանից անմիջապես հետո. «Հակոբ Պարոնյանը նույնպես խոր համակրանք է տածել Վիկտոր Հյուգոյի նկատմամբ, և հաճախ է վկայակոչել նրան: 1870-ական թվականներին Պարոնյանը հույս է հայտնել, որ Հյուգոյի ազատասիրական և խաղաղասիրական զգափարները ապագայում իրականանալու են» (էջ 16): Ապա. «Հանձին Հյուգոյի, Եղիա Տեմիր-ճիպաշյանը տեսնում է բոցաշունչ հեղափոխականին և բռնակալության անհաշտ թշնամուն, բայց միաժամանակ՝ սիրո, գթության և ժողովուրդների եղբայրության անխոնջ քարոզչին» (էջ 17) և այլն, և այլն: Եվ այսպիսի սրտմաշուկ տաղտկությամբ իրար են հաջորդում Հրանտ Ասատուրի, Գաբրիել Սունդուկյանի, Բաֆթու, Նիրվանադեհի, Մանուկ Աբեղյանի, Գրիգոր Զոհրապի, Լևոյի, Արշակ Զուպանյանի, Սողոմոն Սողոմոնյանի, Էլիզ Պետրոսյանի, Հրաչյա Հովհաննիսյանի, Արշալույս Բաբայանի և այլոց կարծիքների բավականին հասարակացված շարադրանքները: Ըստ որում, նույնիսկ այս դեպքում, աչքից չի վրիպում հետևյալ մանրամասնությունը:

Երբ 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած, հայ գրականության մեջ սկսեց ամբողջանալ գրական հաջորդ ուղղությունը՝ ռեալիզմը, այդ ուղղությանը դավանողների առաջին գործը եղավ անվերապահորեն պայքարի դրոշ կրողը՝ Ռոմանտիզմի և Ռոմանտիկ հեղինակների ղեկավարողության ալիքները հայկական Ռոմանտիզմի ներկայացուցիչներից բացի աստիճանաբար հասան նաև նրանց ջահակրին՝ Վիկտոր Հյուգոյին: Ի դեպ նշենք, որ Վիկտոր Հյուգոյի վերաբերյալ այդ նոր մոտեցումն արդեն սկսել էին ֆրանսիացիները, հանձինս Էմիլ Զոլայի: Հանրահայտ է, որ Գրիգոր Մսերյանը, թերևս առաջին անգամ, չափավոր կարծիք հայտնեց Վիկտոր Հյուգոյի մասին: Հյուգոյի մեծությունն ընդունելով հանդերձ, նրան հնացած հեղինակ էին համարում Տիգրան Կամսարականը, Գրիգոր Զոհրապը, Զիֆթե-Մարաֆը, Հյուգոյի մասին շատ էլ դրական չէր սրտահայտվում Շիրվանզադեն և այլն: Գասպարյանին, Իհարկե, հայտնի են մեր այս և մյուս ռեալիստ հեղինակների կարծիքները, սակայն այդ ամենը բոլոր էությունը քննելու ու մեկնաբանելու փոխարեն, նա ընտրել է այսպիսի տարօրինակ մի մեթոդ. բոլոր այն դեպքերում, եթե կարծիք հայտնողները շատ էլ հանրահայտ-անձնավորություններ չեն (օր. Գրիգոր Մսերյան), ապա հեղինակը հայտարարում է, որ նրանք սխալվել են, չեն հասկացել Հյուգոյին, չեն կարողացել ըմբռնել նրան և այլն: Իսկ եթե Հյուգոյին քննադատողները մեր գրականության այն մեծություններից են (օր. Շիրվանզադե), որոնց հետ չի կարելի վերևում նշված հեշտ ձևով հաշիվները մաքրել, ապա Գասպարյանը պարզապես չի հիշատակում նրա կարծիքը և հանգիստ խղճով, հարցը դրանով լամարում է սպառված: Կարիք չկա, թերևս, ասելու անգամ, որ նման ինքնահնար «մեթոդը» ոչինչ ընդհանուր չունի իսկական գիտության հետ, և բավականին տխուր է խոսում Հայկ Գասպարյանի հայագիտական-բանասիրական կարողությունների մասին:

Աշխատության երկրորդ գլուխը, որն ունի «Վիկտոր Հյուգոյի երկերի հայերեն թարգմանությունները» խորագիրը, սկսում է լայն նախապատրաստությամբ. «Այժմ փորձենք ցույց տալ,— դրում է հեղինակը,— թե Վիկտոր Հյուգոյի երկերը ինչ հանգամանքների բերումով, ինչպես և ում ձևերով են թարգմանվել, պրական ինչպիսի ազդեցություն և քաղաքական-հասարակական ինչպիսի նշանակություն են ունեցել հայ ժողովրդի պատմական կյանքի տարրեր չըջափուլիում» (էջ 57): Այսինքն՝ հեղինակը պատկերացում ունի այն բարդ ու բազմազան անելիքների մասին, որն ինքը պետք է կատարի այս գլխում, և, շտապենք ասել, որ այդ անելիքներն իրոք բարդ են ու բազմազան: Ինչպես հայտնի է, Հյուգոյի գեղարվեստական ստեղծագործությունը չափազանց լայն է ու բազմակողմանի: Մոտ 70 տարիների իր գրական գործունեության ընթացքում նա հանգստեց չէ մերթ որպես լիրիկ, մերթ սաուրիկ, տվեց բազմաթիվ դրամատիկ գործեր, դրսևորեց իրեն որպես կրթող ժողովրդիստ-հրապարակախոս, գրեց բազմաթիվ վեպեր, մշակեց իրենց ազգային էպոսը և այլն, և այլն: Սիրելով ու հարգելով Հյուգոյին, հայ հեղինակները, սակայն, տարապայման մոտեցում ունեցան դեպի մեծ Ֆրանսիացու գրական ժառանգությունը: Այն դեպքում, երբ նրա գործերից շատերը մնացին լքարգմանված, շատերն էլ հայ ընթերցողին ներկայացվեցին սոսկ հատվածաբար, վեպերի մեջ եղան այնպիսիները, որոնք երկու հրատարակություն ունեցան: Հայ ընթերցողն այդպես էլ իր մայրենի լեզվով չկարողացավ «Աշխատանքի տերներ» (1831 թ.), կամ՝ «Մթնշաղի երգեր» (1835 թ.), կամ «Ներքին ձայներ» (1837 թ.): Խորագրերը կրող ժողովածուներում գետնադրված Հյուգոյի բազմաթիվ բանաստեղծությունները, բայց դրա փոխարեն մեծ մասամբ հայացվեց «Արևելյան» խորագիրը կրող ժողովածուն: Հայերեն լիարժեք մանվեց Հյուգոյի «Բուրգրաֆներ» չափածո դրաման, բայց դրա փոխարեն ոչ միայն հայերեն թարգմանվեցին, այլև բեմադրվելու բախտին արժանացան «Լուկրեցիա Բորջիայ», «Էռնանի», «Ժյուլ Բլյազ» (հայերեն թարգմանված է Ռիչ Պլասս ձևով), «Անշնչո» և մի քանի այլ գործերը, և այլն: Հարկավոր էր հանգամանորեն քննել այս հարցերը, գտնել տվյալ գործի թարգմանվելու կամ լքարգմանվելու դրուպատոմաները, դիտել այդ ամենը 19-րդ դարի հայ գեղարվեստական գրականության պարզացման համընդհանուր ֆոնի վրա, ի հայտ բերել Հյուգոյի գործերի թարգմանության մեր իրականության հետ ունեցած բազմապիսի առնչությունները: Սակայն «Վիկտոր Հյուգոյի երկերի հայերեն թարգմանությունները» գլխում բոլոր նշված կարգի հարցերը հեղինակը շատ հանգիստ կերպով պարզապես մի կողմ է թողել: Իրա փոխարեն՝ Դասպարյանը բիրիոգրաֆիկ ճշտապահությամբ շարադրել է Հյուգոյի գործերի բոլոր թարգմանությունները, որոնք տարբեր ժամանակներում կատարել են հայերը, եթե այն տպագրվել է մամուլում, ապա հիշատակված է տարեթիվը, ամիսն ու օրը, հիշատակել է թարգմանիչների անուն-ազգանունները, նրանց ով լինելը, և, որոշ դեպքում, տվել է տվյալ գործի վերաբերյալ անոտացիոն բնութագրի մի քանի տեղեկություններ: Ահա բոլորը: Այսինքն մի աշխատանք, որը, առավել և՛ամ պակաս խնամքով, արդեն կատարել են հանրային գրադարանի կամ Մատենադարանի համապատասխան բաժինները: «Զեյթունի ապստամբության նախօրէին,— գրում է հեղինակը,— դեռևս 1859 թ., Հ. Սվաճյանը «Մեղու» հանդեսում տպագրում է Հյուգոյի «Moïse sur le Nil» բանաստեղծության թարգմանությունը «Մովսէս գերծնալ ի ջուրց» վերնագրով (Տրվում է «Մեղի» տարեթիվը, ամիսն ու էջը): Ապա, «Մկուտի Պեշկեթաշլյանը Զեյթունի ներսպական ապստամբությամբ ներշնչված 1862 թ. գրում է իր «Հայ քաջորդին» Հյուգոյի «Տղան» բանաստեղծության նմանությամբ» (Հիշատակվում է Պեշկեթաշլյանի ժողովածուն, տեղը, թիվը, էջը): Ապա, «Հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին խիստ հարազատ ու համահնչյուն է նաև Հյուգոյի «L'Art et le peuple» բանաստեղծությունը, որի թարգմանությունը Գրիգոր Զիլինկիրյանը տպագրում է իր «Ծաղիկ» հանդեսում 1864 թ., «Ժարտարություն և ժողովուրդ» վերնագրով (Հիշատակվում է «Ծաղիկ» հետ կապված մանրամասնությունները): Կամ, «Սահմանադրության ստեղծման և գործադրման համար... պայքար էր մղվում արևմտա-հասարակական հոսանքների միջև: Այդ կապակցությամբ Հ. Սվաճյանը 1861 թ. «Մեղու» հանդեսում տպագրում է Վիկտոր Հյուգոյի ճառը, որը վերջինս արտասանել էր 1850 թ. մայիսի 23-ին, Պրանսիայի ազգային ժողովում, ընդհանուր քվեարկության մասին»: «Դրամաների թարգմանություններից ամենահաջողն է «Լուկրեցիա Բորջիայի» թարգմանությունը, որը կատարել է Տիգրան Տետյանը (պիտի լինի Տետյան. Ս. Շ.) և առանձին գրքով հրատարակել 1862 թ. Զմյուռնիայում: Այդ թարգմանության մասին Հ. Սվաճյանը իր «Մեղու» գրում է...»: «Արքայի գրոսնու» դրաման առաջին անգամ թարգմանել է պոլսաձայ թատրոնի մեկենասներից Բլյաս Զայյանը

(1862 թ.), իսկ հետագայում նաև Պետրոս Դուրյանը։ Այդ մասին տեղեկանում ենք Հրանտ Ասատուրի հուշերից, որտեղ ասվում է...: «Հյուգոյի սոցիալական հայացքները մեր իրականության մեջ մասսայականացնելու նպատակով Չիլիսկիրյանը 1862 թ. հունիսի 1-ից ձեռնարկում է «Քաղաքների» թարգմանությունը, որը պարբերաբար տպագրվում է «Ծաղիկի» էջերում։ Ուշագրավ է, այն հանդամանքը, որ «Քաղաքների» սկսում է հայերենի թարգմանվել, երբ բնագիրը գեո նոր էր լույս տեսել Փարիզում»։

Կարիք կա՞ նոր օրինակներ բերելու։ Կարիք կա՞ ասելու, որ այսպիսի հասարակ, առօրեական ձևով և այսպիսի պարզունակ տրամաբանությամբ, չի կարելի գրել թեկուզ ամենաշարքային գրողի մասին։

Գրական կուրյոզներով չի է մենագրության երրորդ գլուխը, որն, ի դեպ, ունի վերին աստիճանի ամպագոգոտ մի վերնագիր. «Վիկտոր Հյուգոյի ազդեցությունը հայ գրականության վրա»։ Հիշյալ գլուխը գրելիս, հեղինակն առաջնորդվել է այսպիսի մի մեթոդով։ Նա գիտե, որ Հյուգոն ստեղծել է, ասենք, այլանդակ ու ծուռտիկ մի հերոսի՝ Կվադիմոդոյի կնիւպարը։ Եվ բավական է, որ հայ գրողներից որևէ մեկի մոտ գտնվի արտաքին-ֆիզիկական համանման նկարագիրն ունեցող մի կերպար և անողորմ եզրակացությունը պատրաստ է. Հյուգոն աղդել է տվյալ հեղինակի վրա։ Այս զարմանալի մոտեցմանը զոհ են գնացել հայ գրականության գրեթե բոլոր խոշոր ներկայացուցիչները, որոնք առանց այլևսյունության հայտարարվում են Հյուգոյի «Մետեորները»։ Այսպես օրինակ, խոսելով Բաֆֆու և Հյուգոյի ստեղծած տիպերի գրական առնչության մասին, Գասպարյանը լրջորեն գրում է, «օրինակ, Ժան Վալժանի և քավոր Պետրոսի կերպարների ընդհանրությունը նրանումն է, որ երկուսն էլ նախապես գող են եղել, իսկ հետագայում ուղղվել են» (էջ 221)։ Կամ, «Հետաքրքրական են նաև Ժավերի և Քովմաս էֆենդիի զուգահրությունից բացահայտվող տարբերությունները։ Նրանց միակ ընդհանրությունը նրանում է, որ երկուսն էլ տարիներ շարունակ հալածել են անմեղ մարդկանց, իսկ վերջում, խղճի խայթից ինքնասպանություն են գործել» (Անգ)։ Կամ, «Ռոմանտիկ հեղինակներին ընդունել է նաև անգիշող և մոլեռանդ կերպարի պատկերումը... «Քաղաքներում» բարիկադային կոմիկների ժամանակ ապստամբների պարագլուխ Անժելլաքը հրացանով նշան բռնում և սպանում է հարձակվող կառավարական գործերի սպային...։ Նույնպիսի անգիշողության օրինակների հանդիպում ենք Բաֆֆու վեպերում։ «Կայծերում» Կարոն սպանում է իր մտերիմ ընկերոջը՝ Ռաֆայելին, կասկածելով, որ բերանբացությամբ նա հայտնել է իր ընկերների գաղտնիքը։ «Սամվելում» Սամվել Մամիկոնյանը իր ձեռքով սպանում է իր հարազատ ծնողներին, որովհետև վերջիններս դավաճանել էին հայրենիքին» (էջ 222)։ Կամ, «Այնուհետև թե Հյուգոն և թե Բաֆֆին սիրում են վանքեր ու ամրոցներ նկարագրել։ Երկուսի վեպերում էլ հանդիպում ենք վանքերի ու ամրոցների երկար ու մանրամասն նկարագրություններին» (էջ 225)։

Նույն ձևով էլ «Բացահայտված է» Հյուգոյի ազդեցությունը Մերենցի վրա։ Մենագրության 30-րդ էջում կարդում ենք. «Մերենցի ռեկուրսը Ք դարում վեպում Հովնանի և Գուրգեն Արծրունու ընկերության որոշ գծերը, նրանց գործելակերպը, փոխհարաբերությունները և նույնիսկ ֆիզիկական առանձնատեսությունները մոտիկից հիշեցնում են Հյուգոյի «Բեռնարդին» վեպի հերոսներից Սիմուրգենին ու Գովենին»։

Այս թեզն ապացուցելու համար օժտված կովանը ավելի քան զավեշտական է, «Սիմուրգենը ժողովրդի ծոցից ելած մարդ է, աղնիվ, մոլեռանդ, անգիշող, միջին տարիքի և միջին կազմվածքով։ Սիմուրգենի բոլոր արարքներից հրեում է, որ դատողությունն է իշխում նրա զգացմունքների վրա»։

Հովնանն էլ, Սիմուրգենի պես, ժողովրդից ելած շարքային մարդ է, աղնիվ, մոլեռանդ, անգիշող, միջին տարիքի, միջին կազմվածքով...։ Բանականության և զգացմունքների բախման դեպքում Հովնանն էլ, Սիմուրգենի նման, հնազանդվում է բանականության ձայնին» (էջ 231-232)։

Գրական փոխհարաբերությունների՝ Գասպարյանական հայտնագործությունները մեջ են բերում առանց համապատասխան մեկնաբանումների, որովհետև նրանք իրենք պերճախոս կերպով խոսում են իրենց մասին։

«Բեռնարդինը» վեպի մյուս հերոսը Գովենն է։ Նա պատկանում է աղնավականության դասին, երիտասարդ է, քաջ, հաղթամարմին, ուժեղ, կրթությամբ ղինվորական...։ «Երկուսն էլ մյուս գլխավոր հերոսը՝ Գուրգեն Արծրունին շատ գծերով նման է Գովենին։ Նա էլ իշխանական տոհմից

է, զինվորական, ևրիտասարդ, ԽժՀ-ի, ուժեղ և անվահերձ (էջ 232) կամ. «Հայ պոեզիայի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Դանիել Վարուժանը, որը խոր հիացմունք էր տածում հեպի Վիկտոր Հյուգոյն, իր «Բեղասր» գրքի է, ամենայն հավանականությամբ ոգեշնչվելով «Երբ-վարը» բանաստեղծությունից:

Հյուգոյի և Վարուժանի հիշյալ երկերի (ի՛մա. բանաստեղծությունների. Ս. Շ.) թեմատիկ ընդհանրությունը նրանումն է, որ երկու գեպընդ էլ պոետը Պեգասին հեծած, սլանում է դեպի մուսաների աղբյուրը՝ ներշնչվելու համար» (էջ 249):

Օրինակները կարելի է բերել ոչ թե միավորներով, այլ տասնյակներով: Մնում է միայն զարմանալ, թե ինչպես է պատահել, որ 19-րդ դարի ևրկրորդ կեսի հայ գեղարվեստական գրականության բոլոր ներկայացուցիչների վրա Գասպարյանը չի «Գտել» Հյուգոյի ազդեցությունը և ինչպես է պատահել, որ այդ շրջանում հրատարակված բոլոր գործերի բոլոր կերպարները չի համարել «Հյուգոյից առնված ազդեցության հետևանք»:

Նույնը պետք է ասել և աշխատության չորրորդ ու վերջին գլխի մասին, ուր քննվում է հայ մտավորականների գրական կապերը Հյուգոյի հետ:

Այստեղ էլ, այդ կապերը, և նրանց ծնող գրական-հասարակական պատճառները քննվում և փոխարեն, Գասպարյանը սոսկ թվարկել է, թե որ հայ գրողը ինչպիսի նամակ է գրել, կամ ինչ բովանդակության նամակ է ստացել Հյուգոյից, կամ որ թվականից մինչև որ թվականն է ծանոթ եղել նրա հետ, այդ ծանոթության ժամանակ ինչպիսի խոսակցություն է եղել նրանց միջև և այլն:

Այսպիսի անգիտակությամբ հրատարակված գիրքը կարգալուց հետո, ակամայից ենթադրում ես, որ նրա խմբագիրն էլ եղել է գրականության .և. կապ չունեցող մեկը, որպիսիներին, ցավոք սրտի, վերջին շրջանում հասախ են վստահում խմբագրի կարևոր ու պատասխանատու գործը: Սակայն գրքի վրա, որպես խմբագիր նշված է պատկառելի մի անուն՝ Արամ Ինճիկյան. մի գիտնական, որի հայագիտական-բանասիրական կարողությունները վեր են ամեն մի կասկածից: Հարց է ծագում. այդ գեպընդ ի՞նչն է ստիպել նրան խմբագրելու մի աշխատանք, որին ոչ մի տիպի խմբագրություն չէր կարող ոգեշնչել:

Չենք խոսում աշխատության ճապաղ, ծամծամված լեզվի մասին, չենք խոսում մտքերի անկանոն, խառնափնթոր ձևակերպությունների և հայոց լեզվի տարրական բերականության կանոնները ոտնահարող նախադասությունների մասին, չենք խոսում, վերջապես, ծիծաղ հարուցող պաթետիզմի մասին, որը մեկից ավելի անգամ է հանդիպում աշխատության մեջ, և որը հեղինակը հավանում է ներկայացնել որպես գրականագիտական չեղձ վերլուծություն: Բավական է կարգալ բերված օրինակները, ասվածի մեջ համոզվելու համար:

«Վիկտոր Հյուգոն հայ գրականության մեջ» թեման գեղես կի բարձրացված և սպասում է իր ձեռնհաս քննադատին. այս է այն միակ և վերջնական եզրակացությունը, որին հանգում է ամեն ոք, գրախոսվող աշխատությունը կարգալուց հետո:

Որպես վերջաբան՝ ավելացնենք հետևյալը:

Երբ հանդես է գալիս ևրիտասարդ քննադատը, և որն է գործի առթիվ իր խոսքն ասելիս թույլ է տալիս որոշ ձախիկություններ, անճշտություններ կամ նույնիսկ սխալներ, դա ինչ որ չափով պատճառարանված է ու հասկանալի, դեռևս քիչ է գրականագիտական փորձառությունը, պակասում է անհրաժեշտ հմտությունը, որը ձեռք է բերվում տարիների ընթացքում. և կա հարկավոր շրջահայացությունը և այլն: Բայց երբ հանդես են գալիս անուն ունեցող փորձառու գրականագետները, որոնց գրական ծառանգությունն ու կատարած գործը արդեն որոշակի տեղ ունի հանրայնությունը, գիտական կյանքում և աշխատությունը գնահատելիս թույլ են տալիս անհանդուրժելի սխալներ, — ապա այս հանգամանքը, մեղմ ասած, արդեն տարակուսանք է առաջացնում: Հայկ Գասպարյան, գրքի լույս աշխարհ գալուց անմիջապես հետո, մեր պարբերականներում իրար հետևից հանդես եկան բանասիրական գիտությունների թեկնածու Սողոմոն Սողոմոնյանը (ՏՆ՝ս «Երևան», 1964 թ. № 72, «Վիկտոր Հյուգոն հայ գրականության մեջ»), ապա՝ բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ռուսեթ Հովհաննիսյանը (ՏՆ՝ս «Գրական թերթ», 1964 թ. № 15, «Արժեքավոր ուսումնասիրություն»), և արդեն վերջերս՝ բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Սալոմե Արեշյանը (ՏՆ՝ս «Коммунист», 1964 թ. № 109 «Оригинальная монография») և իրենց գրախոսականներում անզուսպ դրվստանքի, փառաբանության, սանձակոտոր հիացքի այնպիսի շտեմնված-չլսված դողանքի շալկերին, որ անկարելի էր պատկերացնել

անգամ. «Վիկտոր Հյուգոն հայ դրականության մեջ» աշխատությունը հայտարարվեց հայ ռասախրության խոշորագույն նվաճումներից մեկը, մեծարժեք ուսումնասիրություն, «գրական կապերին նվիրված գործերի մեջ լավագույնը», օկարևոր ավանդ հայագիտության և հյուգոյագիտության մեջ» և այլն և այլն, իսկ Արեշյանը հավստիորեն մտադրվելով գերազանցել նախորդներին գրեց որ «Труд Г. Гаспаряна является новым, ценным вкладом в советское (курсив мой. С. Ш.) литературоведение...» Ի՞նչ Արեշյանը, ո՞ր Աճառյանը, ո՞ր Տերտերյանն են երբեք արժանացել այսպիսի կոսմիկական մեծության գնահատականների: Իրոք Արեշյանը լրջությամբ կպնդի, որ Հայկ Գասպարյանի աշխատանքը, որի ինչ լինելը ցույց տրվեց վերևում, գիտական մեծարժեք նորություն է, և այն էլ՝ ոչ ավելի ոչ պակաս, վերցրած ամբողջ սովետական գրականագիտության մասշտաբով: Իսկ այսպիսի գրախոսականները, այն էլ դրված հեղինակավոր անձանց կողմից ոչ միայն ոչ մի օգուտ չեն կարող տալ Հայկ Գասպարյանին, այլև ուին պատրանքներ կստանան նրա մոտ՝ իր աշխատանքի հաջողված լինելու, ընտրած թեմայի մշակման կապակցությամբ ինչ որ բանի հասած լինելու, սևփական սխալների վրա համոռնելու, իսկ սխալները մատնացույց անողների մոտ՝ միտում, գիտավորություն տեսնելու հարցում: Եթե, վերոհիշյալ մեր երեք ընկերները իրոք խորապես հավատացած են Հայկ Գասպարյանի աշխատության հաջողված լինելու մեջ և նրանց գրախոսականները, այդ անկեղծ հավատի արտահայտությունն են, այդ դեպքում պետք է ողջակի հայտարարել, որ նրանք վատ գիտեն Հյուգոյի և հայկական մշակույթի փոխհարաբերության հարցերը:

Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆ